ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE12-8EA2-43C7-93F4 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/5355/02/24 ք. Երևան
18 Դեկտեմբերի 2025թ

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Տիգրան Գրիգորյանս (այսուհետ նաև՝ Դատարան) , ծանոթանալով թիվ ԵԴ2/5355/02/24 քաղաքացիականգործի նյութերին,

ՊԱՐԶԵՑ

Դատարանի (դատավոր՝ Ա.Սաֆարյան) 28.10.2024թ. որոշմամբ վարույթէ ընդունվել քաղաքացիական գործն ըստ հայցի «Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ի ընդդեմ «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի՝ թիվ «ԵԲԳԿ-ԳՀԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.06.2024թ. կազմված թիվ 5 արձանագրությամբ ընդունված «Ալֆա Էտալոն» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և գնահատող հանձնաժողովին՝ հայցվորի կողմից ներկայացված հայտը՝ գնային առաջարկն ինքնարժեքից պակաս ներկայացնելու հիմքով

մերժել պարտավորեցնելու պահանջների մասին:

Նշված Դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ՝ կիրառվել է հայցի ապահովման միջոց:

Էլեկտրոնային համակարգով քաղաքացիական գործը 17.12.2025թ. վերամակագրվել է դատավոր Տ.Գրիգորյանին և հասանելի է դարձել:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.5-րդ հոդվածի 2րդ մասի համաձայն՝ գնումների հետ կապված վեճերը քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեսուն օրվա ընթացքում: Դատարանի պատճառաբանված որոշմամբ սույն մասով նախատեսված ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ՝ մինչև տասն օրացուցային օրով:

Վերոգրյալի հիամ վրա՝ Դատարանը գտնում է, որ քաղաքացիական գործը պետք է ընդունել վարույթ, դրա քննությունը շարունակել ընդհատման պահից և նշանակել եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 188-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.6-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑ

Քաղաքացիական գործն ընդունել վարույթ, քննությունը շարունակել ընդհատման պահից և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր նշանակել 15.01.2026թ.:

Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին ՀՀ ֆինանսների նախարարությանը:
Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Digitally signed by GRIGORYAN TIGRAN 4008820477
Date: 2025.12.18 12:24:56 AMT

Դատավոր՝
Տիգրան Գրիգորյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am